Արձանագրություն N 2

2023 թվականի առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/10/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «09» «Նոյեմբերի» 2021թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Վ. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ	Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Վ. Հակոբյան)

Ընդունել ի գիտություն, որ 03.10.22թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2022 թվականի հոկտեմբերի 13-ին, ժամը 14:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2022 թվականի հոկտեմբերի 14-ին ժամը 14:00-ին: 2022 թվականի օգոստոսի 17-ին ժամը 11:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացելու նպատակով:

Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Թեոֆարմա Ինպորտ» ՍՊԸ	mercado@netsys.am	00471216

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Վ. Հակոբյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Վ. Հակոբյան)

Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան, սակայն քանի որ մասնակցի կողմից առաջարկվող դեղը

գրանցված չէ Հայաստանի Հանրապետությունում գնահատող հանձնաժողովը մեկ օրով կասեցրել է գնահատումը և էլեկտրոնային աճուրդ համակարգի միջոցով ծանուցել մասնակցին շտկել առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը (ֆիրմային անվանումը և ապրանքային նշանը), ինչպես նաև ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված հավաստող տեղեկանքը: Էլեկտրոնային աճուրդ համակարգում 19.10.2022թ. հասանելի է եղել «Թեոֆարմա Ինպորտ» ՍՊԸ-ի կողմից ներբեռնված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը, իսկ վերոգրյալ տեղեկանքի մասով ներկայացրել է գրություն, առ այն, որ պահանջված տեղեկանքի համար անհրաժեշտ է ևս 5 աշխատանքային օր: 27.10.2022թ. «Թեոֆարմա Ինպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրամադրված պահանջված տեղեկանքը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Վ. Հակոբյան)

Մասնակցի կողմից ներկայացված վերջնական գները 14.10.2022թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով (excel):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Վ. Հակոբյան)

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին

(Վ. Հակոբյան)

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/10/1» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Վ. Հակոբյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակցի կողմից ներկայացված հայտը՝

Որոշվեց.

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/10/1» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-43,560,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով.
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2023/3» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չսահմանել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Վ. Հակոբյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

«ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷՄԻԼ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
«НАУЧНЫЙ ЦЕНТР ЭКСПЕРТИЗЫ ЛЕКАРСТВ И МЕДИЦИНСКИХ ТЕХНОЛОГИЙ ИМЕНИ АКАДЕМИКА ЭМИЛЯ ГАБРИЕЛЯНА» АОЗТ
«SCIENTIFIC CENTRE OF DRUG AND MEDICAL TECHNOLOGY EXPERTISE AFTER ACADEMICIAN EMIL GABRIELYAN» CJSC

Կոմիտաս պող. 49/5, Երևան 0051, Հայաստան
пр. Комитаса 49/5, Ереван 0051, Армения
49/5 Komitas aven., Yerevan 0051, Armenia

Tel.: (+374 60) 83-00-73, (+374 10) 23-16-82, 23-08-96
E-mail: admin@pharm.am
Web: www.pharm.am

0101141522

27.10.2022

Թեոֆարմա Իմպորտ ՍՊԸ, ՀՀ

Գլխավոր տնօրեն Վահրամ Մակինյանին

Էլ. փոստ՝ arman_makinyan@theopharma.am

Հարգելի պարոն Մակինյան,

Ի պատասխան Ձեր 21.10.2022 և 27.10.2022 թվականի գրությունների հայտնում եմ, որ 27.10.2022 թվականի դրությամբ մեզ հասանելի աղբյուրների համաձայն ներկայացված տեղեկատվությամբ ներքոնշյալ դեղը գրանցված է ԱյՍիԷյչ (ICH) անդամ երկրում՝

1. Պեգասպարգազ ներարկում լուծույթ 3750ՄՄ սրվակ 5մլ (տեղեկատվությունը այլալեզու է, դեղը գրանցված է Չինաստանում, դեղի գրանցման հավաստագրի իրավատերը կամ արտադրողը «Jiangsu Hengrui Pharmaceutical Co., Ltd., No.38, Huanghe Road, Economic and Technological Development Zone, Lianyungang» ընկերությունն է):

Հայտնում եմ նաև, որ ներմուծման խնդիրներից խուսափելու, ինչպես նաև կենտրոնի կողմից տրված տեղեկանքի հավաստիության հաստատման համար անհրաժեշտ է մինչև դեղի մատակարարելը ներկայացնել մրցույթին ներկայացված դեղի ներմուծման ենթակա փաթեթները եւ ներդիր թերթիկը:

Տնօրեն՝ Արայիկ Բաղրյան

2023 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք պեզ-ասպարագինազա դեղի
վերաբերյալ վերջնական գներով 14.10.2022թ. Կայացած հակադարձ աճուրդից հետո

N/N	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Թեռֆարմա Իմպորտ» ՍՊԸ							
					Նախնական առաջարկ				Վերջնական առաջարկ			
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Պեգ-ասպարգինազա	60	740,000.00	44,400,000.00	36,666,666.67	7,333,333.33	44,000,000.00	733,333.33	36,300,000.00	7,260,000.00	43,560,000.00	726,000.00